

Կամ դրօշուց շըրշիւն՝ որ ՚ի հեղաշունչ հողմոց գոգ առեալ
Յերկոսին՝ ՚ի դաշտուն նախանձընդդէմ ծըփան ծալ՝ ՚ի ծալ:

Այլ ահա բոմբիւնք հրետից ՚ի ճակատ գոռան բանակաց,
Ուշմքաձիգ փողոց գանգ տըւեալ ահեղ տան և առնուն դարձուած.
Հուսկ սաստկաշառաչ ըըռնավէժ ճայիթեալ շանթըն բոցահուր
Թըռչի, հարկանէ յորոտ մահաձայն և հիազարհուր.....

ԼԱՄԱՐԹԻՆ

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ՔԱՂԿԵԴՈՆ



ՏԱՐԻՈԹՆ մէջ կայ ժամանակ մը՝ յորում դպրոցականն լի սրտա-
գրաւ զգացմամբք և զուարթ ակնկալեաք կը սպասէ հնձելու ա-
ռատապէս իւր բազմաջան քրտանց պտուղը, յետ երկայն ջանից և աշ-
խատութեան: Վերջապէս՝ ՚ի մեծ ցնծութիւն աշակերտաց, ծագեցաւ
օրհնեալ օրը՝ յորում աշխատութիւնն պիտի ընդունէր իւր արդար
վարձքն: Եւ ահա յուլիս 43ին կիրակի օր՝ ՚ի վարժարանի Մխիթա-
րեան Հարց վենեստկոյ ՚ի Քաղկեդոն կատարուեցաւ պարզեաբաշխու-
թեան հանդէսն:

Այս դպրոցական հանդիսին մէջ գերերջանիկ Ազարեանին ներկա-
յացուցիչ էր Գերպաք. Յարութիւն ձամնեան, եպիսկոպոս Պուրսայի:

Վարժարանի գաւիթն ճարտարութեամբ զարդարուած էր. մէջտեղն
կային մեծաշուք թուրքա մը, և նկար մը՝ որուն վրայ գրուած էր՝ ՚ի տա-
ճիկ լեզու և կեցյէ թագաւոր մեր» «Բատիշահնը մըր չօք եալա»:

Հրաւիրելց բազմութեան մէջ մոտադրութեան արժանի էին Մեծա-
պատիւ Լէշիս Պէյ, նախագահ Ճ՝ քաղաքական շրջանակին. Մեծա-
պատիւ Յովհաննէս էֆէնտի Սաբըզ, Մեծ. Ալի Ղալիպ էֆէնտի, տե-
սուչ օստարազգի դպրոցաց. Մեծ. Դիւանապետն հասարակաց դաս-
տիարակութեան պաշտօնարանին. Գերյարգելի Աբրայն Անտոնեանց.
Գեր. Սահակ Վ. Հաճեան քարտուղար կաթողիկէ հայոց Պատրիար-
քարանին, և ուրիշ նախաւոր անձննք:

Երբ նախագահն եկաւ, Համիտէ քայլերգն հնչեցուցին:

Զորս ուղերձք կարդացուեցան, որոց մէջ Վ. Հ. Արիստակէս Վ.
Ղասղանտիլեանի գրութիւնն շատ լաւ տպաւորութիւն ըրաւ Հան.

զիսականաց վրայ հայկական լեզուին գեղեցիկ գարձուածովք հոչա-
կելով զիառու Մեծափառ Սուլթան Ապտ-իւլ-Համիտ խանի.

Հոս կը գնենք այն աշակերտաց անուանքը, որոնք իրենց վկայա-
կաններն ընդունեցան դպրութեանց և զիտութեանց մէջ, յետ քըն-
նութիւն տալրու վարժարանի ուսուցչաց առջեւ, նոյնպէս և առաջի
Պ. Շարվիթի՝ որ ուսուցիչ է ՚ի կայսերական վարժարանի ՚ի Ղալաթա-
- Սարայ, և Միհրան էֆէնտիր Աբիկեան՝ թարգման ՚ի Սէրասպէրս :
Փուլթարին այս անձինք վարժարանի մեծաւորին հրաւիրանօր և ու-
զեցին անձամբ քննել զաշակերտու . չէին յուսար այնպիսի յառա-
ջադէմ անձինք գտնել տաճիկ և գաղղիական լեզուաց մէջ, ինչպէս
եղան Գրիգոր Պէճիատեան, Լևոն Արալանեան, Յովհաննէս Մինասեան,
Արմենակ Հիւրմիւգեան, Արթին՝ Գումրուեան :

Առաջին ոսկի միտալ և բարձրագոյն մրցանակ ընդունող աշա-
կերտն եղաւ Ստեփան Տոմինեան. միշտ առաջին կոյուցաւ լեզուաց
և զիտութեանց մէջ: Եթոյ կու զան Անտոն Մահճուպեան, որ ըն-
դունեցաւ ոսկի միտալ. Երուանդ Պեճիտեան, արծաթ միտալ. Ար-
տաւազը Հանրմեան՝ արծաթ միտալ: Հրաւիրեալք այցելութիւն ը-
րին յետոյ տեսնելու աշակերտաց աշխատութիւնքն գեղագրութեան,
նկարչութեան և ուրուագրութեան մէջ: Եւ առանձինն մոտադրո-
թեան արժանի եղաւ նկար մը՝ Յովսէկ Մինասեան և Ետկար Շա-
հինեան աշակերտաց արդիւնք. որոց երկրորդն առանձին յարմա-
րութիւն ունենալով նկարչութեան, Միսիթարեան Հարք զրկեցին
զինքն ի Վենետիկ գեղարտեատից մէջ կատարելագործելու համար :

Վարժապետք՝ կոստանդին Հարիքիօփուլօ դաշնակահար, Քափօ-
ջելի՝ ջութակահար, Գիրը՝ սրնգահար հիացուցին զունինդիրս գեղե-
ցիկ հատուածներ ի միասին դաշնաւորութեամբ երգելով:

Գեր. Յարութիւն Եպիսկոպոս Ճամճեան Գերերջանիկ Աղարեան
Պատրիարքին կողմանէ ոսկիէ զցյգ մը ճարմանդ ընծայեց Ստեփան
Տոմինեան աշակերտին, որ ամենէն աւելի բարձրագոյն մրցանակի
արժանացեր էր, և հանդէսն վերջացաւ նախագահին համառօտ խօս-
քերովն :

